Ս. ՇՏԻԿՅԱՆ

# ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Հարցի բանասիրական պատմությունը ծայր է առնում Կարապետ ՈՒթուջյանի խմբագրությամբ, Պոլսում հրատարակվող «Մասիս» օրաթերթի 1880 թվականից, երբ այդ թվականի ապրիլի 1-ի համարում (№ 2587) հրատարակվում է «Մկրտիչ Պեշիկթաշլյանի անտիպ մեկ տապանագիրն» խորագիրը կրող արևմտահայերեն կարճառոտ մի ընծայական, որին էլ հաջորդում է 16 տողից բաղկացած գրաբար մի բանաստեղծություն։ Նկատի ունենալով բանաստեղծությանը նախորդող ընծայականի կարևորությունը, այն մեջ ենք բերում ամբողջությամբ։

«Հետևյալ տողերը գրած է Մկրտիչ Պեշիկթաշլյան, ազգին սիրելի բանաստեղծն, ի վերա գերեզմանի Հանըմյան Չ. Բառնաբաս, որ էր ի միաբանության Մխիթարյանց Վիեննայի, և վախճանեցավ տարաժամ ի Պոլիս։ Այս տապանագիրս, որ առաջին անգամ տպագրությամբ ի լույս կընծայվի, յուր պարզ և միանգամայն գողտրիկ հյուսվածքովն, խոր տպավորություն մը կընե ընթերցողին մտաց վրա։ Պեշիկթաշլյան հավասարապես ճարտար էր յուր քնարին զանազան թելերը թրթռացնելու արվեստին մեջ, չենք կրնար ավաղել (իմա, ափսոսալ, ողբալ, Ս.Շ.) ըստ բավականի յուր կորուստն»։

Այս ընծայականը քիչ ավելի մանրամասն մեկնաբանությունների կարիք ունի նախ այն առումով, որ բացահայտվում է վերին աստիճանի ուշագրավ և պեշիկթաշլյանագիտությանը անհայտ մի նոր կարևոր կապ մեր դասականի և Վիեննայի Մխիթարյան միաբանության գործիչներից մեկի միջև։ Եթե առ այսօր մենք բավարար խորությամբ գիտեինք Մկրտիչ Պեշիկթաշլյանի գրական և անձնական մտերմության մասին մյուս՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հանդիսացող մեկից ավելի գործիչների հետ, քանզի ինքը՝ Պեշիկթաշլյանը այդ միաբանության աճեցրած ու դաստիարակած սաներից էր, ապա այս՝ երկրորդ դեպքում, համապատասխան տեղեկություններ պարզապես չկային։ Կարիք չկա, թերևս, ասելու, որ այս նոր կապի բացահայտումը, – կապը Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամի, իսկ բացառված չէ նաև ամբողջ միաբանության պետ, կարող է անհայտ ծալքեր բանալ մեր դասականի կյանքն ու գործը ուսումնասիրելու տեսակետից։

Բառնաբաս Հանըմյանի մասին մեր տեղեկությունները, տարաբախտաբար, հեռու են բավարար լինելուց։ Այսքանը միայն կարողացանք պարզել, որ նա ծնունդով Պոլսեցի էր,

տարրական կրթությունն ստացել էր իր ծննդավայրի հայկական վարժարանում, ապա ուսման մեջ կատարելագործվելու համար մեկնել էր Վիեննա՝ Մխիթարյանների մոտ։ ՈՒսանելով այնտեղ հավանորեն երեք տարի, վերադարձել էր իր ծննդավայրը՝ Պոլիս և այնտեղ զբաղվել էր ուսուցչությամբ։ Վախճանվել էր համեմատաբար երիտասարդ՝ երեսունչորս տարեկան հասակում Պոլսում և թաղվել էր քաղաքի հայկական Շիշլիի գերեզմանոցում։ Թաղման ժամանակ, ի թիվս այլոց, հանդես էր եկել նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը, կարդալով գրաբար գրված իր դամբանական բանաստեղծությունը։

Այս համառոտակի ծանոթությունից հետո, մեջ ենք բերում Մկրտիչ Պեշիկթաշլյանի հիշյալ բանաստեղծությունը, որը, ինչպես արդեն ասվեց, առաջին անգամ հրատարակվել է «Մասիս» օրաթերթի՝ վերևում հիշատակված համարում և որը, ինչպես ցույց տվեց քննությունը, մեր դասականի բանաստեղծությունների հետագա ժողովածուներից և ոչ մեկում չի զետեղվել։

Ընդ անձուկ վիմաւս տըխուր մահարձան,

Հանգչի Բառնաբաս, ծնունդ Հանըմեան,

Յերեսուն և չորս հասակին իւր ամ,

Ծաղկեալ լի արդեամբք, հատաւ տարաժամ։

Առաթուր զաշ և երկրէ պանդուխտ,

Զանձն ձօնի ետ երկնից յաւերժ ուխտ։

Դիմեաց ի Վիեննա, ի քաղաքամայր,

Ընկալաւ ի գիրկ ըզնա Մըխիթար։

Դարձն ի մեծն աստէն Կոստանդեան քաղաք,

Երկնից տեսութեան վառ ի սուրբ փափաք,

Աւանդեաց անբիծ ըզհոգին կուսան

Ի ծոց անմահին յուր արդարքն յուսան։

Ընդ ծով կենցաղոյս բարեօք ակաղձուն,

Նաւեալ աստ եհաս փոթորկաւ մահուն,

Բերկրեսցի ի ճեմ յաստեղաց կայան,

Որ ազգատոհմին թող աստ սուգ փոխան։

Կարծում ենք, որ Մկրտիչ Պեշիկթաշլյանի գրական չափածո ժառանգությունը թեկուզ այսքանով հարստացնելը, այսինքն՝ առ այսօր անհայտ մի բանաստեղծությամբ ավելացնելը, չի կարող երկրորդական լինել, թեկուզ նրա գրական վաստակը ավելի ամբողջացնելու տեսակետից։

Գրական թերթ, 1986, № 51

դեկտեմբերի 19